ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Հրայր Հակոբյան.

   Արուս Աթանեսյան.

   Աննա Դավթյան.

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության գործատուների հետ համագործակցության և աշխատանքային միգրացիայի բաժնի պետ.

   - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի փորձագետ.

   - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ընտանիքի սոցիալական գնահատման բաժնի փորձագետ.

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Վրաստան (Թբիլիսի), 2024 թվականի հուլիսի 10-ից 12-ը.

4. **Հրավիրող կողմը.**

Միգրացիայի միջազգային կազմակերպություն.

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Միգրացիայի ներուժի խթանում սոցիալ-տնտեսական զարգացման համար Հայաստանում և Վրաստանում» ծրագրի շրջանակներում կազմակերպված փորձի փոխանակման աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

- Աշխատաժողովի առաջին օրը հանդիպում է տեղի ունեցել Վրաստանի օկուպացված տարածքներից բռնի տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության ներկայացուցչի հետ, ում կողմից ներկայացվել են շուրջ երեք հարյուր հազար հարկադիր Վրաստան վերադարձած միգրանտների համար կառավարության կողմից իրականացված և ներկայում իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերը:

- Աշխատաժողովի երկրորդ օրը պատվիրակությունն այցելել է Կախեթիի տարածաշրջանում Թելավի և Ախմետա համայնքներ, հանդիպել Կախեթիի նահանգապետի հետ: Հանդիպման ընթացքում Հայաստանի պատվիրակությանն են ներկայացվել վերադարձող միգրանտների վերաինտեգրմանն ուղղված համայնքային աջակցման ծրագրերը, նահանգի, ազգային և տեղական մակարդակներում վերաինտեգրման ոլորտում իրականացվող քաղաքականությունը: Թելավիում հանդիպում է տեղի ունեցել նաև Վրաստան վերադարձած միգրանտ Մարինա Ալթունաշվիլիի հետ, ով Թելավիում երաժշտական թերապիայի կենտրոն է հիմնել հաշմանդամություն ունեցող երեխաների, ընտանեկան բռնության

զոհ դարձած կանանց և այլ խմբերի հետ աշխատելու նպատակով: Պատվիրակությունն այցելել է նաև համայնքային մեկ պատուհանի սկզբունքով գործող պասարկման կենտրոն, որը խորհրդատվություն է տրամադրում վերադարձած միգրանտներին և տեղացիներին:

- Աշխատաժողովի երրորդ օրը նվիրված է եղել Հայաստանի, Մոլդովայի և Վրաստանի միջև փորձի փոխանակմանը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ԱՍՀՆ աշխատակիցների կոմից ներկայացվել է (Աննա Դավթյան, Արուս Աթանեսյան և ՄՍԾ աշխատակից Հրայր Հակոբյան) Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում վերադարձի և վերաինտեգրման լիազորությունների փոխանցման, վերաինտեգրման ոլորտում Հայաստանի Հանրապետության լավագույն փորձի և մարտահրավերների, զբաղվածության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն: Ներկայացվել են նաև դեռևս մշակման փուլում գտնվող ինետգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորմանն ուղղված ռազմավարության և քաղաքականության վերաբերյալ որոշ մանրամասներ: ԱՍՀՆ և ՄՍԾ ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև ընթացող քննարկումներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում ֆորմալ որոշումներ չեն կայացվել, կողմերը փոխանակվել են կոնտակտային տվյալներով՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, կապ հաստատելու նպատակով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է շարունակել մասնագիտական համագործակցությունը՝ վերադարձի և վերաինտեգրման, ինչպես նաև ինտեգրման ոլորտներում՝ ըստ անհրաժեշտության:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Հրայր Հակոբյան 18/07/2024

Արուս Աթանեսյան

Աննա Դավթյան